

ՏԱՐԱՍ ՇԵՎՋԵՆԿՈ

(Մահվան 100-ամյակի առթիվ)

Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ

Ուկրաինական հանճարեղ բանաստեղծ Շեչենկոյի գրական ժառանգությունը արժանի տեղ է գրավում համաշխարհային առաջավոր մշակույթի պատմության մեջ: Շեչենկոն իր բարձր հումանիստական մտահայեցողությամբ նվիրական երգիչ է ժողովրդական այն զանգվածների համար, որոնք հերոսական պայքար են մղում երկրագնդի բռնակալ ուժերի դեմ՝ հանուն ժողովուրդների ազատագրման և եղբայրության լուսավոր պատգամների հաղթանակի:

1

Շեչենկոյի ներհուն բանաստեղծությունների առաջին ժողովածուն («Կորզար») լույս է տեսել 1840 թ.: Այդ փոքրիկ ժողովածուի մեջ զետեղված անկեղծ և սրտաբուխ երգերը մեծ տպավորություն էին թողել անվանի ուկրաինական գրողների վրա: «...Լավ է, շատ լավ է. — ավելին չեմ կարող ասել», — գրում է Շեչենկոյին Կվիտկա-Օսնովյանենկոն, երբ ստանում է բանաստեղծից «Կորզարի» առաջին այդ հրատարակությունը: Նույնպիսի ուժգին տպավորություն է թողել նաև 1841 թ. հրատարակված նրա երկրորդ ժողովածուն («Գալդամակներ»):

Վաղեմի գալդամակային-կազակային Ուկրաինային նվիրված երգերի մեջ ուշագիտ ընթերցողները նշմարում էին սոցիալական ինտոնացիա և հարազատ ժողովրդի մտորումներին արձագանքող հայրենասեր պոետի դեմքը: Առաջավոր ուկրաինացիների համար պարզ էր, որ երգիչը ծառայում է անցյալի դաժան բռնակալների դեմ և երգելով հայրենի Ուկրաինայի իդեալականացրած հերոսներին, բյուր անհեծքներ է ուղղում ընդդեմ իշխանների և կալվածատերերի: Նկարագծելով գեղեցիկ ուկրաինական բնության վայրերը, բանաստեղծը միաժամանակ ցույց էր տալիս գյուղերի տխուր պատկերը և նման արտահայտիչ միջոցներով ուրույն բնույթ էր հաղորդում զայրույթով համակված իր երգերին: Ահա, օրինակ, ինչպես էր նկարագրում Շեչենկոն իր մի բանաստեղծության մեջ ուկրաինական գյուղական առօրյան.

«...Սոսկալի վատ է այդ գյուղում. սև հողից՝ ավելի սևացած մարդիկ թափառում են. կանաչ դաշտերը սևացել են. փտել են սպիտակավուն տնակները. քանդվել են. կարծես այրվել է գյուղը, կարծես մարդիկ էլ խելագարվել են...»:

Իր մեկ ուրիշ բանաստեղծության մեջ երգիչը անհուն կսկիծով գրում է. «Իսկ ահա այնտեղ — ցանկապատի մոտ մեռնում է սովահար մանուկը, մայրն էլ հնձվորուհի է կալվածատերի դաշտում...»:

Երբեք չի մոռանում Շևչենկոն մանկական տխուր իր հուշերը: Նույնիսկ իր կենսատենչ և լուսավոր մեղմ երգերի մեջ նա միշտ մտցնում է բողոքի և զայրույթի ուժգին երանգ:

Ավելի ուշ՝ հասարակական բեկման «նոր օրերին», 1860 թ. «ոեֆորմների նախամուտին» սուսերեն մի ամսագրի խմբագիրը խնդրում է բանաստեղծին նկարագրել իր կյանքի էջերը: Իր նամակի մեջ Շևչենկոն կանգ է առնում բացառապես մանկության և պատանեկության մուսյլ օրերի վրա, հիշեցնում մոտ ու սիրելի հարազատների ծանր ճորտական վիճակը: «Այո, մեծապատիվ պարոն, նրանք այսօր էլ տակավին ճորտեր են...»: Այդ նամակը ցնցող տպավորություն է թողնում Շևչենկոյի ժամանակակից ընթերցողների վրա:

Շևչենկոն «անդորր» և «անկոխի ապրումների» երգիչ չէր: Ահա ինչու նրա միշտ իմաստալից, դեղակերտ ու նվագային երգերը դառնում են մարտական պատգամներ առաջավոր ուղիախնական երիտասարդության համար: Ականավոր սուս սեռայուցիոն-դեմոկրատ գործիչներ Դորրոլլուբովը և Չերնիշևսկին, ինչպես հայտնի է, ունեին հետևողներ նաև ուղիախնական մտավորականների շրջանում: Ահա այդ մտավորականներն էլ տարածելով Շևչենկոյի երգերը միաժամանակ բացահայտում և ընդգծում էին երգերի սեռայուցիոն իմաստը: Ավելի հեռատես և փորձված ընթերցողները հաճախ անորոշ ակնարկները կարգում էին, մեկնաբանում ու լրացնում՝ բացահայտելով առանձին տողերի ընդդիմադրական բնույթը: Լինում էին դեպքեր էլ, երբ ինքը բանաստեղծը աշխատում էր օգնության հասնել ընթերցողներին: Նա իր կտրուկ գիծն էր վարում՝ հակառակ լիբերալ ընթերցողների սպասումներին:

Ահներև է, որ դեմոկրատական շրջապատում ավելի անողորմ և կտրուկ կերպով էին դրսևորվում սեռայուցիոն մտորումները: Գեղակերտ պոեմները նա սիրում էր, բայց երբեք չէր ցանկանում հետևել «անկոխի ապրումների» երգիչների ուղեգծին: Ահա ինչու նրա պատկերավոր բանաստեղծություններն անգամ դառնում են շատ աղղու պրոպագանդիստական վավերագրեր: Վաղեմի ուղիախնական ժողովրդական երգիչների—բանդուրիստների նման նա ոչ միայն գրում էր ինտիմ ոճով, այլև կարողանում էր այրել ընթերցողների սիրտն ու հոգին, ստեղծել անսահման զայրույթ ընդդեմ իշխողների ու շահագործողների: Ցարական բռնապետության մշտարթուն սպասավորները չէին կարող մոլեզին և եռանդուն բանաստեղծի նկատմամբ բռնել խաղաղ դիրք: Նույն այդ սպասավորներին հայտնի էր նաև, որ բանաստեղծը սերտորեն կապված էր ընդհատակյա կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Այդ օրերին ուղիախնական «Կիրիլո-Մեֆոդիևի» հայտնի ընկերությունը ազգային-ազատագրական պատգամներ էր առաջադրել: Երբ այդ ընկերության դեկավար անդամները ձերբակալվում են, Նիկոլայ I-ը խստագույն պատժի է ենթարկում առաջին հերթին ազատատենչ երգերի հեղինակ Շևչենկոյին: Կայսերական հատուկ որոշման համաձայն, ըմբոստ բանաստեղծը պետք է աքսորվեր Օրենբուրգի նահանգը, որպես հանցավոր զինվոր: Ցարը կարգադրում է, որ ոչ մի պարագայում նրան չթույլատրվի նկարել կամ գրել: Դեկաբրիստների դահիճը դիտելը, որ բանաստեղծ-նկարչի համար անհնարին էր ավելի դաժան պատիժ հնարել: Նիկոլայ Պավլինի կարգադրությունը ցույց է տալիս, որ Ցարսա Շևչենկոն հիմնականում մեղադրվում էր ոչ թե ընդհատակյա «ընկերության»-ը աջակցելու, այլ սեռայուցիոն բանաստեղծություններ գրելու համար: Պաշտպանելով սլավոն ժողովուրդների «ազատագրություն» դատը, «կիրիլո-մեֆոդիևցի-

ների» ղեմնորատական թևի ներկայացուցիչները գտնում էին, որ քաղաքական ինքնուրույնություն ստացած սլավոն ժողովուրդները պետք է կապված լինեն միմյանց հետ ֆեոդոստիոլ կառուցումով: Ապագա ինքնավար համայնքների մեջ պետք է լինեք կրոնի ազատություն, սլավոն յեզուների և զրականության ազատ դասավանդում, վերջապես դասերի և ճարտարությունների վերացում: Մասնաձևով դադուխան քաղաքականության դեմ, այդ պահանջները նշմարելի հարվածներ էին հասցնում իշխող սոցիալական կարգերին: Ահա ինչու 1847 թ. հունիսին Շեչենկոն ձերբակալվում և անհապաղ արստրվում է Օրենբուրգի նահանգը: Հետագայում ջանալով ամբիջի ծանր կացություն ստեղծել բանաստեղծի համար, ցարիզմի սպասավորները երեք ամսից հետո արստրական-բանաստեղծին ուղարկում են ամելի հեռու՝ Օրսկի բերդը: Պետերբուրգից ստացված նոր կարգադրության համաձայն Շեչենկոն նույն բերդից «փոխադրվում» է դեպի Կասախից ծովի ափական ափում կառուցված Նովոպետրովսկի բերդը:

Տասր տարի նա ապրում է հեռու վայրերում, ամենածանր պայմաններում, ևնթարելով ցարիզմի տնօրինությանը մշակված զաժանողունքն ակորեսիաների: Միայն 1857 թ. բանաստեղծի մտերիմ ծանոթներին հաջողվում է ձեռք բերել պետի ազատության մասին անհրաժեշտ կարգադրությունը:

Շեչենկոն բերդի սրտեռի կարգադրությամբ պաշտոնական ուղեղի է ստանում մինչև Նիժնի-Նովոգորոդ քաղաքը: Մայրաքաղաքում հաստատվելու համար նա պետք է ստանար առանձին և նոր կառավարական կարգադրություն: Շեչենկոն, սակայն, կամենում էր շուտափույթ կարգով մեկնել արստրավայրից: Նա պայմանավորվում է մի ձկնորսի հետ և ապա նավակով երեք օրվա ընթացքում հասնում Աստրախան: Շեչենկոն նկարագրում է իր թափառումներն այդ քաղաքում: Վաղեմի իր աշակերտներից մեկը՝ խոշոր վաճառական Սապոժնիկովը առաջարկում է բանաստեղծին միասին ուղևորվել Նիժնի-Նովոգորոդ: Կամիշին քաղաքի մոտ նավ է բարձրանում մի ուղևոր և հայտնում է, որ ինքը լիազորված է ջերմորեն ուղունել պետին: Մերձվորյան քաղաքներում ապրող ուկրաինացիներին արդեն հայտնի էր, որ Շեչենկոն ազատվել է: Բնորոշ է այն էլ, որ բանաստեղծը իր ուղևորների շրջանում կարգում է Օգյուստ Բարբիեի այն բանաստեղծությունը, որ ուղղված էր ակակցիոն գործիչների դեմ («Շնիթի խրախճանք»): Այն հանգամանքը, որ դեռևս արստրական դինվորի շինել հաղնող բանաստեղծը խնջոյքի ժամանակ հնարավոր էր համարել կարգալ Բարբիեի բանաստեղծությունը, ինքնին արդեն ցույց է տալիս, որ Շեչենկոն չէր կամենում հաշտարար դիրք բռնել հին կարգերի երկրպագուների նկատմամբ:

Բանաստեղծին տեսնելու նպատակով Մոսկվայից դալիս է ականավոր դերասան Շչեպկինը: Քաղաքացիների վրա մեծ տպավորություն է թողնում երկու նախկին ճարտերի տեսակցությունը: Երբ Շեչենկոյին իր ծանոթները լուր են հասցնում կառավարական նոր կարգադրության մասին, նա անհապաղ Մոսկվա է ուղևորվում և այնտեղ հանդիպում է ունենում արստրից վերադարձած զեկարբիստ Վոլկոնսկու հետ: Շատ ջերմ է ընդունում Շեչենկոյին հայտնի գրող Ակսակովը: Բանաստեղծի օրագրի՝ մեջ նշանակալից տողեր կան այդ մասին:

¹ Շեչենկոյի վերադարձի մանրամասնությունները նկարագրված են նրա «Օրագրում»: Т. Шевченко, Дневник, Москва, 1939.

Պետերբուրգում նույնպես Շեչենկոյին մեծ հանդիսավորությամբ են ընդունում: Ակադեմիայի պրեզիդենտ Տոլստոյի տանը հավաքվում են մայրաքաղաքի մտավորականները: Առանձնապես ջերմ են մտենում Շեչենկոյին արմատական երիտասարդության ներկայացուցիչները: Բանաստեղծի նվիրական մտորումներն ու հայացքները լավ հայտնի էին նրա ծանոթներին: Սովորաբար, ընկերական հավաքույթներում Շեչենկոն երգում էր ուկրաինական ժողովրդական «գումկաները» և բացահայտորեն արտահայտում իր հոգեկան ապրումներն ու հույզերը: Ուկրաինական ինտիմ «գումկաները»—կես-ուրախ և կես-տխուր երգեր էին, որոնք թե՛ արտահայտում էին ունշալար ուկրաինացիների մտորումները, և թե՛ միաժամանակ բացահայտում ուկրաինական ժողովրդի դիրքը իշխող կարգերի նկատմամբ: Իր ազդու և մեղմ ձայնով Շեչենկոն կարծես ավելի ցայտուն կերպով էր ընդգծում ժողովրդական գումկաների իրական իմաստը: Ոչ ոքի համար այլևս դադունիք չէր, որ Շեչենկոն ամենևին չէր փոփոխվել, մնացել էր սեռայուցիոն-դեմոկրատներին ձայնակցող բանաստեղծ, Գորբուլյուբովի ու Չերնիշևսկու երկրպագու: Բնորոշ է համենայն դեպս այն, որ մայրաքաղաքում կազմակերպված մի գրական հանդեսի ժամանակ ժողովականները անշափ ջերմ են ընդունել առանձնապես Շեչենկոյին:

Շատ որոշակի էր այդ օրերին նաև չիբերալների դիրքը: Խաղաղ և մեղմ, անկոխ ու հաշտաբար երգեր էին ցանկանում լսել պոետի վաղեմի լիբերալ ծանոթները: Նման սպասումներին և պահանջներին արձագանքելու փոխարեն, Շեչենկոն նույնիսկ իր լուսավետ երգերի մեջ ընդգծում էր բողոքի տրամադրություններ: Ահա ինչու Գերցենը պրոտ է, որ Չապոևի հայտնի «Փրիստոփայական նամակների» մեջ առաջադրված մուսլ բողոքից հետո, Շեչենկոյի «լուսավետ» պոեզիան ոչ միայն թարմ շունչ է մտցրել ուսև իրականության մեջ, այլև բողոքի տրամադրությամբ ոգևորել է ընթերցողներին: Շատ ավելի կարուկ կերպով են գնահատել Շեչենկոյի դերը Գորբուլյուբովը և Չերնիշևսկին: Անսահման աակելությամբ է նա ծաղրել ու խարաղանել բռնակալ կալվածատերերին ու ցարական բռնապետության ներկայացուցիչներին: Նա կերտել է սուր քննադատությամբ հագեցված երգիծաբանական երգեր: Նրա ստեղծագործական հարուստ ժառանգության մեջ նշանակալից էջեր են կազմում ցարիզմի գաղութային քաղաքականության բնութագրմանը նվիրված երգերը: Շեչենկոն պատմում է, թե ինչպես է ցարական բռնապետությունը նետվել մանր ժողովուրդների դեմ, ինչպես է նա շղթաներով և բանտերով, տաճարներով և շափցրուտենով խեղդել ժողովուրդներին: Մուսլագույն ներկերով է նկարագրում բանաստեղծը ճորտատիրական կարգերը, թալանչիական պատերազմները, ժողովրդական ցասումը, արյան դաշտերը...: Իր «Վովկաս» բանաստեղծության մեջ Շեչենկոն դատափետում է ցարական բռնապետության ներկայացուցիչներին: «Միրիբն անսահման է,— պրոտ է Շեչենկոն,— իսկ բանտերը, իսկ մարդիկ անհրաժեշտ է արդյոք մի ու մի հաշվել. մոլորվացուց մինչև ֆիններ, ամեն ինչ լոտում է...»:

Աքտորավայրում Շեչենկոն ուսումնասիրել է, ի միջի այլոց, կիրգիզ աշխատավորների կյանքը: Ահա ինչպես է Շեչենկոյի «Օրագիրը» նկարագրում ցարական Ռուսիայի շանքերով կիրգիզների նկատմամբ տարվող «կուլտուրտրեզերական» վայրագ գործելակերպը: «Դարեր շարունակ անհայտ էր անսպասող, հայտնաբերում ենք այդ անսպասող, արդեն ամբողջներ ենք կառուցել աշխտեղ, քիչ հետո կը լինեն նաև գերեզմաններ...»: Շեչենկոն կանգ է առնում

հոգեւոր «հայրերի» վրա և հիշեցնում է, որ այդ սև գործիչները խաբել ու հիմարացրել են ժողովրդին: Մոլեղնորեն նկատելով «աստծո» դեմ նա դուռնում է՝ «Գուցե դու էլ ծիծաղում ես՝ դիտելով մահացող գյուղերը, գուցե դու էլ միացել ես կալվածատերերի հետ ու պայմանավորվում ես նրանց հետ»: Անաս-ճան գայրույթով համակված, ժողովրդական մեծ բանաստեղծը դիմելով երկնային բարձունքներից դիտող «ամենատես աչքին» հայտնում է դրան, որ նա՝ այդ «ամենատես աչքը», քնած է, կուրացել է և միանդամայն անուշադիր վերաբերմունք է ցուցաբերում գեպի անխրափությունը: «Մի՞թե,—դուռնում է Շեչենկոն,— դու զարմանում էիր, երբ շվեյցարիացի կալանավորներին հարյուրներով Միբեր էին քշում, երբ գանակոծում էին, կախաղան էին հանում սուրբ ստրուկներին. և դու այդ շփտեի՞ր...»: Բիբլիական սաղմոսներին հատուկ տոնով կառուցված այդ ցատումնալից բողոքը շատ ազդու մի կոչ է.

Եվ չը կուրացա՞ր: Աչք դու, աչք դու...

Դու այնքան էլ խորը չես դիտում.

Դու քուն ես մտել, իսկ արքաներին,—

Սատանան տանի այդ սիլվեներին...

Հանձարեղ բանաստեղծի ստեղծագործությունների մեջ մոլեղին երգերի կողքին մեծ տեղ են բռնում լիրիկական ներհուն երգերը, որոնք յուրահատուկ նոր «դումկաներ» են: Բանաստեղծը երգում է հայրենի երկրի գեղեցիկ բնությունը, գյուղական խրճիթները, գեղջուկ աշխատավորների ապրումները: Բնութագրելով Շեչենկոյի լիրիկական նրբին երգերը, Ա. Լունաչարսկին համեմատում է ուկրաինական երգերը նեապոլիտանական այն երգերի հետ, որոնք կես-տխուր և կես-ուրախ են: Միամիտ ընթերցողներն անգամ կարող են տեսնել ուկրաինական գեղեցիկ բնանկարի պատկերավոր ֆոնի վրա տխուր երանգները՝ սովահար ճորտերի, ողբացող այրիների, գանակոծվող ստրուկների դիմաստվերները: Երբեք Շեչենկոն չի մոռանում, որ շահագործվողների ու շվեյցարիացի ստրուկների ողբը առանձնահատուկ տան է հաղորդում գեղեցիկ ուկրաինական հայրենիքի ինքնահատուկ կուրբիտին: Իր «Չիգիրինի» մեջ Շեչենկոն գրում է, որ կգա ժողովրդական ապստամբության օրը, կսրվեն դանակները: Անիծելով հայրենակից «պաներին» Շեչենկոն կարականապես հրաժարվում է «անկոփ ապրումների» հետևողների սղեգժից: Շեչենկոյի բանաստեղծությունների մեջ նրբին երգերը միաժամանակ ազդու կոչեր են, մոլեղին քարոզ ու պրոպագանդ:

2

Հայտնի է, որ ուսու սկանավոր արվեստագիտների շրջանում Շեչենկոն, որպես նկարիչ, շատ բարձր է գնահատվել: Ազդվելով սկզբնական շրջանում Բրյուլովից, Շեչենկոն հետագայում հանդես է եկել ավելի բացահայտորեն, որպես ուսուստական արվեստի համոզված ջահակիր: Ամեննին պատահական չի կարելի համարել այն, որ իր օրագրի մեջ նա դիտավորությամբ քննադատում է, որ ինքը ուսուստ Զեդոսովի երկրպագուներից է և չի կարող ձայնակցել այս-

¹ Շեչենկո, Կորգար, թարգմ. Գ. Սարյան, Երևան, 1939, էջ 353:

պես կոչված «անդորր» ու «անազարտ» արվեստի զաղափարախոսներին: Ֆեդոտովը, ինչպես հայտնի է, նկատելի չափով եղել է գոգոլյան ռեալիստական արվեստի հետևորդ: Շեչենկոյի համար թանկ ու սիրելի էր այդ նկարչի զեմոկրատական ուղղությունը: Բնորոշ է, որ ինքը Շեչենկոն կանգ է առել բացառապես աշխատավոր մարդկանց կերպարների վրա: Գեղջուկ ուկրաինացիները, կանայք, ճնշված աշխատավորները, շարքային զինվորները դառնում են սիրելի կերպարներ նրա համար: Բանաստեղծ-նկարիչը ջանացել է շատ յուրահատուկ ձևով բացահայտել իր ուրույն մտահայեցողությունը նույնիսկ լիրիկական տոն ունեցող բնանկարների մեջ: Այսօր առանձնապես մե՛ք ավելի լավ ենք նշմարում այն, ինչ որ չէին կարողանում տեսնել Շեչենկոյի ծանոթներն ու ժամանակակիցները: Շատ պարզ տեսնում ենք, որ իր նկարների և էսքիչների, մանավանդ տաղանդավոր օֆորտների մեջ մեծ բանաստեղծը արտահայտել է իր ներհուն հրգեթի հիմնական մոտիվները: Ահա թե ինչու հիշված գեղարվեստական ստեղծագործությունները շատ կարևոր վավերագրեր են, որոնք բացահայտելով երգչի հայեցողության հատկանշական գծերը, լրացուցիչ լույսով են մեկնաբանում նաև նրա բանաստեղծությունների առանձին մոտիվները: Շատ ինքնատիպ «կոմենտարներ» նման այդ նկարները ազդու և պատկերավոր կերպով բացահայտում են հանճարեղ մտածողի և բանաստեղծի հույզերն ու հոգեկան ապրումները: Գեղակերտ գործերի մեջ գծված են՝ ուկրաինական բնանկարը, աշխատավորների դեմքերը, կենցաղային բնորոշ դետալները: Աքսորավայրում առանձնապես մեծ զգացումով Շեչենկոն կերտել է անշափ ուշադրավ նկարներ՝ արտերկան զինվորների և ապա կիրգիզների նկարներ: Միրով և հարգանքով է մոտենում Տարաս Շեչենկոն կիրգիզներին ու միաժամանակ կարողանում է ջերմ տոնով արտահայտել արևելյան ճնշված փոքր ժողովուրդների հոգեկան նկարագիրը: Իր արսորի վերջին օրերին, թուլացված թուն ստանալով, Շեչենկոն կերտում է կիրգիզ մանուկների անշափ ազդու նկարները: Երբ ուշադրությամբ դիտում ենք երկու մանուկ կիրգիզների տաղանդավոր այդ նկարը, ավելի քան պարզորոշ կերպով նկատում ենք նորից **թեմայի**, սյուժեի, նկարագծված դեմքերի շատ ուրույն «հրապարակախոսական» բնույթը: Ինքը՝ Շեչենկոն էլ նշմարվում է այդ իմաստալից ստեղծագործության մեջ:

Այդպես էր մեծ ժողովրդական հրգիչը: Նկարչությունն էլ, գրավյուրներն ու օֆորտներն էլ դառնում են նրա համար քաղաքացիական քարոզին օժանդակող կարևորագույն զենքեր: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ այդ նկարների տեխնիկան ու արվեստը բարձր են և շատ բարձր են գնահատվում **անդամ** տաղանդավոր ուսու արվեստագետների կողմից:

Ինքը Շեչենկոն ևս անշափ բարձր պահանջներով էր մոտենում գեղարվեստին: Իր օրագրի մեջ կանգ առնելով դերմանական նոր արվեստի վրա, նա քննադատում է ռեալիզմից հեռու կանգնած նկարիչներին: Միաժամանակ նա ընդգծում է «հին» արվեստի «հսկաների»՝ Հուլբեյնի և Դյուրերի հանճարեղ ռեալիստական գործերը, որոնք, արվեստի բարձր հուշարձաններ լինելով հանդերձ, յուրահատուկ ձևով արծարծել են կյանքի հրատապ պրորբլեմները: Շեչենկոյի համար մեծագույն նշանակություն ունեին առանձնապես կյանքին ակտիվորեն արձագանքող նկարները: Մեղ թվում է, որ նրա համար ոչ պակաս շափով կարևոր նշանակություն է ունեցել նաև Հոլբեյնի և Դյուրերի կողմից շոշափված ուրույն թեմատիկան: Ուկրաինական մահացող գլուղերն ու սովա-

հար գյուղացիներին նկարող իմաստասեր գեղագետի համար Հուլիանի հայտնի «Մանվան պարը» նկարների սերիան կամ էլ Դյուրերի «Ապոկալիպսիսի» ձիավորների հանձարեղ նկարը ակտուալ և կարևոր էին թե՛ որպես բարձր արվեստի գեղարվեստական արտադրություններ, և թե՛ որպես բունակալների ու շահագործողների դեմ ուղղված շատ յուրահատուկ վավերագրեր: Ամենին պատահական չի կարելի համարել, որ անցյալի ժողովրդական մեծ շարժումների ղեկավարներին վերհիշող Շեշենկոն կանգ էր առնում հենց Հուլիանի և Դյուրերի իմաստասից ստեղծագործությունների վրա: Գեղարվեստը, նշում է Շեշենկոն, պետք է հողեղեն չիսի: Չայնակցելով Չերնիշևսկուն, նա սլաշապանում էր ռեալիստական արվեստի պատղամները: Աբստրակցիզմը մի լեհացի սպա Շեշենկոյին նվիրել էր մի գերմանական իդեալիստ-տեսաբանի ուսումնասիրությունը: Շեշենկոն իր օրագրի մեջ քննական դիտողություն նետելով այդ տեսաբան Լիբբելտի հայեցողության մասին, նորից հանդես է գալիս ռեալիզմի պաշտպանի դերում: Դատափետելով անկենդան իդեալիստ-տեսաբաններին Շեշենկոն գրում է, որ շատ ավելի բարձր արժեք ունեն Վաղարիի հայտնի կենսագրականների տաղանդավոր հատորները, որոնք կապրեն դարեր:

Հիշատակված դիտողությունները ցույց են տալիս, թե որքան մեծ ուշադրությամբ էր մտախնդրում Շեշենկոն ղեկավարվածին: Ազատության մասին լուր ստանալուց հետո նա երազում էր նեոփել մայրաքաղաք և նորանոր նկարներ կերտել: Շատ բարձր նշանակություն էր տալիս նա առանձնապես գրավչությանը և օֆորտին: Գրավչությանը վարպետը, գրում է Շեշենկոն, ավելի դյուրին կերպով կարող է տարածել ղեկավարվեստը: Տաղանդավոր դործերը շատ անգամ մնում են մասնավոր սրահներում, միայն հարուստ մարդիկ են տեսնում այդ ստեղծագործությունները: Այնինչ գրավչությունները կարող են արվեստի վավերագրերը մտահցնել ժողովրդին: Չի կարելի երբեք, նկատում է Շեշենկոն, անուշադրության մասնել նկարների գաղափարական բովանդակությունը: Նկարը պիտի լինի կյանքի իսկական նկարը, պիտի դառնա առօրյայի, բնության, մարդկային տիպարների վերարտադրություն: Քանի որ իսկապես կան զորանոցներ, զինվորներ, կիրգիզներ, շքավորներ, ռեալիստ-արվեստագետը պարտավոր է առաջին հերթին արժարժել այդ պրոպագանդիկ և հողեղեն թեմաների հետ կապված հարցերը:

Ինչպես էլ մտախնայում Շեշենկոյի հայացքներին, չենք կարող երբեք մոռանալ այն, որ թե՛ այդ հայացքները, և թե՛ նրա տաղանդավոր ռեալիստական և միշտ իմաստասից նկարները նշանակալից լինելով հանդերձ, շատ սերտ կերպով կապված են հաև նրա հումանիստական երգերի հետ:

3

Մեծ ժողովրդական բանաստեղծին հայտնի էին անցյալի ժողովրդական շարժումների անվանի պարազուլիսները: Թոմաս Մյունցերին, Յան Զուսին և նման ըմբոստ մտածողներին նա մեծագույն հարգանքով էր հիշատակում: Ներքող էր ձգնում բունակալների կողմից դատափետվող «հերետիկոսներին»: Խոսելով ռուս գյուղացիական մեծ շարժումների ականավոր ղեկավար Ստենկա Թազինի մասին, նա շատ նշանակալից մի դիտողություն է անում, որ Ստենկա Թազինը «բրանդվախտա էր պահում Վոլգայի վրա. նավերից բռնագրաված ապրանքներից տուրք էր դանձում. բաժանում էր շքավորներին. հետևապես

դուրս է գալիս, որ նա կոմունիստ էր...»: Նշանակալից է այն, որ Շեչենկոն նախկին կերպով մոտենալով կոմունիզմին, այնուամենայնիվ համակրանքով էր խոսում այդ մասին: Նա, իհարկե, ճշգրիտ հասկացողություն չունեի կոմունիզմի մասին, ուստիական սոցիալիզմի որոշ հետևորդների նման էր մոտենում ապագա կարգերին և հետևում կրոնա-ժողովրդական հնօրյա հոսանքների ջահիրների ուղեգծին: Նա ծանոթ չէր դիտական սոցիալիզմին: Սակայն և այնպես ժողովրդական մեծ բանաստեղծի այդ միամիտ անուրջներն ու մտորումները չեն կարող անուշադրության մասնվել նրա մտահայեցության թե՛ նշանակալից էվոլյուցիայի, թե՛ բարդ երանգների ուսումնասիրության ժամանակ: Ակնհերձ է, համենայն դեպս, որ բյուր անեծքներ ուղղելով հին աշխարհին, բնակալիների, կալվածատերերի ու դեսպոտ արքաների հասցեին, Շեչենկոն կոչ էր անում կովի ելնել սեփականատիրական կարգերի դեմ, անողոք պայքար մղել ժողովրդի ազատագրման համար, ստեղծել ազատ ժողովուրդների իշխանություն: Այլ խոսքով, Շեչենկոն ակտիվորեն ձայնակցում էր գյուղացիական ռեվյուցիայի անհրաժեշտությունն առաջադրող ուսումնական մեծ ռեվյուցիոն-դեմոկրատներին: Հակասական երանգներ կարելի է գտնել նրա հայեցության մեջ, բայց չի կարելի մոռանալ, որ այդ հակասական երանգները կապված են եղել 1850—60-ական թվականների առաջավոր մտածողների հայեցության հակասական հայացքների հետ: Հիմնականում Շեչենկոն կանգնած էր ցարական դեսպոտիայի, սեփականատիրական դասակարգերի, կալվածատերերի բնակալության վրա խարսխված կարգերի դեմ ծառայող ռեվյուցիոն գաղափարախոսների շարքում: Ահա ինչու նրա մարտական ուղեգիծը անհասկանալի և անհարազատ էր այն ժամանակ իշխող սոցիալական ուժերի ներկայացուցիչներին՝ ազգայնական-բուրժուական և չիբերալ հոսանքների հետ կապված գործիչների համար: Շեչենկոյի հասարակական մտորումներն ու իդեալները թանկ էին ու հարազատ ժողովրդական զանգվածների համար: Ժողովրդի համար ակնհայտ էր, որ նետվելով բնակալիների դեմ Շեչենկոն կոչ էր անում՝ համախմբվել ազատագրական մեծ պայքարի համար: Նույնիսկ իր ասանձին հակասական զեպերումներով մեծ ռեվյուցիոն տրիբունը շատ ավելի բարձր էր միշտ վարանող ու միշտ տատանվող իր ժամանակակից շատ բանաստեղծներից և գեղագետներից:

«...Կլենդոնանան դաշտերն ու լճերը, ազատ ու սուրբ ուղիներ կառուցվեն և իշխանավորները շեն գանի այդ ուղիները, իսկ ստրուկները դեպի այդ ուղիները կուղևորվեն միասին և համախմբված, առանց աղմուկի, առույգ և կենսուրախ, և դվարթ գյուղեր կզանան ամառի անապատները...»: Այսպես է նկարագրում մեծ բանաստեղծ-իմաստասերը դալիք ազատ օրերը, ապագա երջանիկ կյանքը: Այսպիսի պատգամներ քարոզող գործչի համար այնքան էլ հեշտ չէր համակերպվել արքայից հետո Ռուսիայի մայրաքաղաքում ստեղծված ծանր պայմաններին: Հոգնաբեկ բանաստեղծը ցանկանում էր գնալ Ուկրաինա, հաստատվել հայրենի վայրերում, ապրել իր վերջին օրերը Կանև քաղաքի մոտ՝ անտառից և Գնեպր գետից ոչ այնքան հեռու: Ես կուզենայի, գրում է Շեչենկոն իր եղբորը, միշտ դիտել Գնեպր գետը իմ տնակից: Մեծ բանաստեղծը հանրահայտ «Կտակի» մեջ տակավին 1845 թ. կոչ էր անում ժողովրդական զանգվածներին՝ ոտքի ելնել և փշրել շղթաները:

Кайданы порвите
 I вражою злою кров'ю
 Волю окропите.
 I мене в сем'і великій,
 В сем'і вольній, новій,
 Не забудьте пом'янути
 Незлим тихим словом.

(Շղթաները կտրեք,
 Եվ թշնամու շար արյունով
 Ազատություն ցողեք,
 Եվ ինձ այդ մեծ բնասնիրում
 Ե՛վ ազատված, և՛ նոր,
 Մի մոռացե՛ք, հիշեցեք ինձ
 Խոսքով բարի, անդորր...):

Մայրաքաղաքում Շեչենկոյի թաղման հանդեսը ստացել էր իրականում հակահառավարական մեծ ցույցի բնույթ: Լեհական մտավորականության առաջավոր գործիչները հանձնարարել էին իրենց ներկայացուցչին՝ բացահայտել չե՛ ժողովրդի շերտ հարգանքն ու սերը ժողովրդական բանաստեղծի նկատմամբ: Պանտելեևի մեմուարների մեջ նշված են ուշադրավ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ Շեչենկոն սիրելի է եղել բոլոր ժողովուրդների առաջավոր խավերի համար: Շատ ջերմ են արձագանքել առանձնապես ոռա ռեուլյուցիոն դեմոկրատները: Փաղտնիր չէ այն էլ, որ անգամ նախառեուլյուցիոն տարիներին դեմոկրատական գրականության մեջ Շեչենկոն բնութագրվել է որպես դաժան բռնակալական կարգերի դեմ մարտնչող ժողովրդական մեծ երգիչ և ռեուլյուցիոն տրիբուն:

Բնորոշ է նաև այն, որ հարավային Ռուսիայի հայ բնակիչներից մեկը՝ Կոխլովի իմաստալից առակների թարգմանիչ և Ղրիմի հայերի պատմաբան Քուչնարյանը հրապարակել էր վենետիկյան հայերեն «Բաղմալեալ» պարբերականի մեջ Շեչենկոյի «Գայդամակների» մի ֆրագմենտի թարգմանությունը, բանաստեղծի «Կտակի» ֆրագմենտը և հայերեն թարգմանություններին կցել էր իր հակիրճ ու ջերմ ակնարկը:

Հարյուր տարի է անցել Տարաս Շեչենկոյի մահվան օրից: Փոխվել է հիմնովին այն երկիրը, որը բանաստեղծի կյանքի օրերին մահացող աշխատավորների և շղթայակալ աքսորականների մոռյլ բանտ էր: Կատարվել է շատ ավելին, քան կարող էր երազել մեծ պոետը: Այսօրվա բանդուրիստները վաղևմի երգերի հետ միասին երգում են Շեչենկոյի իդեալներին ձայնակցող կենսատու և առույզ երգեր՝ ազատագրված ժողովուրդների վեհապանծ վերելքի մասին: